

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԶ
ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԿԱՅՅԵԼԷ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՅԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԸ**

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի հրաւերին ընդառաջելով եւ Վէն Նայսի Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ հիմնադրութեան քառասնամեակին առթիւ, Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան օրինաբեր այցելութիւն մը շնորհեց Թեմիս եւ անոր համայն հաւատացեալներուն:

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՒ «ՀՐԱՇԱՓԱՌ»-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Նորին Ամենապատուութիւնը Լոս Անճելըսի օդակայանը ժամանեց, Հինգշաբթի, Դեկտեմբեր 3-ին, 1998 առաւօտեան ժամը 11:00-ին եւ սիրալիք կերպով դիմաւորուեցաւ Թեմիս Առաջնորդ Սրբապան Հօր, Հոգեւորականներու Դատուն, այցելութեան կարգադրութեան պատասխանատու՝ Տիար Հայկ Գրիգորեանի, Միապան Խորհուրդներու ներկայացուցիչներու, Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ պատասխանատուներու, Պատրիարք Սրբապան Հօր եղբայրներու, անոնց ընտանիքներու եւ հաւատացեալներու կողմէ:

Բոլոր ներկաները ուղղուեցան Ս. Յակոբ Հայց. Եկեղեցի, ուր «Հրաշափառ»-ի արարողութեամբ Պատրիարք Սրբապան Հայրը մուտք գործեց Եկեղեցի: Կանոնական աղօթքէն ետք, Առաջնորդ Սրբապան Հայրը անձամբ եւ Թեմի անունով, սրտագին բարի գալուստ մաղթեց Նորին Ամենապատուութեան, շեշտելով որ Պատրիարք Սրբապան Հայրը օրինապահութեամբ եւ կարգապահութեամբ, մեծ պարկ կու տայ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան հոգեւոր, կրթական եւ Սրբատեղիներու բարգաւաճման եւ պարգացման: Պատրիարք Սրբապան Հայրը 1962-1966 Առաջնորդն էր Արեւմտեան Թեմին եւ ինք մօտէն ծանօթ է Թեմի աշխատանքներուն:

Պատրիարք Սրբապան Հայրը, իր գոհունակութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբապան Հօր, հոգեւորականներուն, Մուխերու ներկայացուցիչներուն եւ հաւատացեալներուն, իրենց ցուցաբերած ջերմ ընդունելութեան եւ ազնիւ զգացումներուն համար: Նորին Ամենապատուութիւնը շեշտեց Երուսաղէմի Հայոց դարաւոր Պատրիարքութեան կարեւորութիւնն ու պայծառացումը, յատկապէս որ ներկայիս պատրաստութիւն կը տեսնուի քրիստոնէութեան 2000-ամեակի տօնակատարութեան եւ Պատրիարքութեան մասնակցութեան:

Արարողութեան աւարտին տեղի ունեցաւ աջաւամբոյր: Ներկայ գտնուող հաւատացեալները մօտենալով համբուրեցին Պատրիարք Սրբապան Հօր աջը եւ ստացան իր օրհնութիւնները:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿՈԿԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՁ

«Հրաշափառ»-ի արարողությունն էտք, Եկեղեցւոյ Կոկեան Սրահին մէջ մասնաւոր ընդունելութիւն մը կազմակերպուած էր եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ:

Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ, Արժ. Տ. Արշակ Քին. Խաչատուրեան յանուն իր Մուխին, շերմագին բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօր եւ յիշեց, թէ երկար տարիներէ ի վեր մօտէն կը ճանչնայ Նորին Ամենապատուութիւնը՝ Երուսաղէմի իր ուսանողական օրերէն սկսեալ եւ ապա ծառայելով Արեւելեան Թեմէն ներս: Տէր Հայրը գրուստեց Պատրիարք Սրբազան Հօր կարողութիւններն ու առաքիւնութիւնները՝ որպէս ճշմարիտ Հայրը եւ Գլուխը Սրբոց Յակոբեան Միաբանութեան եւ աշխուրջ պահապանը Տնօրինական Սրբավայրերուն: Ապա Եկեղեցւոյ Միական Խորհուրդի Ատենապետը՝ Տիար Պապ Մելքոն նոյնպէս իր բարի գալուստի շերմ խօսքերը ուղղեց Պատրիարք Սրբազան Հօր: Գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը, որուն մէջ բաժին ունեցան նաեւ ներկայ գտնուող եկեղեցականները:

Պատրիարք Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ թուեց Սրբոց Յակոբեանց Միաբանութեան պարտականութիւնները, ըլլան անոնք հոգեւոր, կրթական, սրբատեղիներու պահպանում, շինարարութիւններ եւ կամ նորոգութիւններ՝ շէշտելով որ վանքէն ներս կարիքը ունի աւելի թիւով հոգեւորականներու, նոր բաժանմունքներու եւ պաշտօնեաներու: Պատրիարքութեան ենթակայ են Իսրայէլի, Յորդանանի եւ Պաղեստինեան Իշխանութեան ներքեւ բնակող հայերը եւ թէ Պատրիարքութիւնը իր յարաբերութիւնը կը պահէ այս երեք իշխանութիւններու կառավարութիւններուն հետ:

«ՀՐԱՇԱՓԱՌ» ԳՈՍԹԱ ՄԵՍԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՄԵՋ

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00-ին, Գոսթա Մեսայի Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ մէջ տեղի ունցաւ «Հրաշափառ»-ի արարողութիւն: Եկեղեցին լեցուն էր հաւատացեալներով:

Կանոնական Աղօթքէն ետք, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Մուշեղ Քին. Թաշճեան, երուսաղէմեան հոգեւոր պգացումներով, բարի գալուստ մաղթեց Պատրիարք Սրբազան Հօր, յիշելով որ դարերու ընթացքին աշխարհի բոլոր կողմերէն հաւատացեալներ եւ մեր պարագային յատկապէս հայ հաւատացեալներ, ուխտի գացած են Ս. Երկիր եւ իրենց լուծման նուիրած են վանքի բարեկարգութեան եւ պայծառութեան համար: Տէր Հայրը յայտնեց, որ Ս. Աստուածածնի Մուխը 1999-ին կը ծրագրէ 1700-ամեակի առթիւ, ուխտագնացութիւն մը կազմակերպել Երուսաղէմի մէջ Հին Տոմարով կատարուած Ս. Չատկի Տօնին առթիւ:

Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի հոգեւոր ծառայութիւններուն, շէշտելով որ Թեմը ընդարձակուած է եւ նոր Մուխեր հաստատուած են շատ մը տեղեր՝ Գոսթա Մեսան ըլլալով անոնցմէ մին: Ապա Նորին Ամենապատուութիւնը խօսեցաւ Երուսաղէմի մէջ դարերու ընթացքին Հայոց Պատրիարքութեան նուիրեալ ծառայութեան մասին, ուր ի գին բազմաթիւ պոհողութիւններու, հայոց իրաւունքները պահպանուած են:

Թէեւ ներկայիս հայութեան թիւը նուազած է Ս. Երկրին մէջ, սակայն Պատրիարքութիւնը կը շարունակէ հաւասար իրաւունքներ վայելել Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ եւ Կաթօլիկ Եկեղեցւոյ հետ: Պատրիարք Սրբապան Հայրը կոչ ուղղեց ներկաներուն, որ իրենք ալ իրենց նուիրումով թիկունք կանգնին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հովոյին եւ Մուխի բոլոր ծրագիրներուն: Ապա կատարուեցաւ Երեկոյեան Ժամերգութիւն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՅՏԱԳԻՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Արարողութեան աւարտին, Եկեղեցւոյ Սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը ի պատիւ Ամեն. Պատրիարք Սրբապան Հօր՝ պատրաստութեամբ Տիկնանց Միութեան:

Դարձեալ խօսք առաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ սրտագին բարի գալուստ մատթելով Պատրիարք Սրբապան Հօր, ապա յայտարարեց որ Պատրիարքութեան պայծառութեան համար հինգ հազար Տոլարի նուիրատուութիւն մը կատարած է Տիար Փօլ Խաչիկեան: Ան յայտարարեց, որ սրտաբոխ նուէրները սիրով պիտի ընդունուին Պատրիարքութեան համար: Ներկաներէն շատեր իրենց նուէրները կատարեցին ի նպաստ Երուսաղէմի:

Ապա Եկեղեցւոյ Միապան Խորհուրդի Առեանապետ՝ Տիար Արա Քարաքէշիշ Միապան Խորհուրդի կողմէ իր սրտագին բարի գալուստի խօսքը ըրաւ: Գործադրուեցաւ գեղեցիկ յայտագիր մը Եկեղեցւոյ Մանկանց Երգի եւ Պարի խումբին կողմէ: Չափապանց հաճելի էր լսել մեր փոքրիկներուն արտասանութիւնները, երգերը եւ տեսնել անոնց համաշափ եւ մշակուած պարերը:

Առջնորդ Սրբապան Հայրը իր քաջալերական խօսքով շեշտեց Պատրիարքութեան նիւթապէս օժանդակելու կարեւորութիւնը, եւ իր խօսքէն ետք շատեր իրենց նիւթական նուէրները պահարաններու մէջ գնելով յանձնեցին Եկեղեցւոյ Հովոյին:

Պատրիարք Սրբապան Հայրը մեծապէս տպաւորուած Մանկանց Երգի եւ Պարի խումբի ելոյթէն, իր գոհունակութիւնը յայտնեց եւ գնահատեց պատասխանատուներուն կատարած ջանքերը, փոքրիկները Եկեղեցւոյ մէջ պահելու, հաւատք ներշնչելու եւ վանոնք հայկական ոգիով թրծելու կապակցութեամբ: Նորին Ամենապատուութիւնը խօսեցաւ Վանքէն ներս եւ վանքապատկան այլ կալուածներու վիճակին եւ անհրաժեշտ նորոգութիւններու մասին՝ շեշտելով որ իր Պատրիարք ընտրութենէն ետք, ո՛չ մէկ կալուած ծախսուած է եւ թէ Պատրիարքութիւնը ամէն ձեւով ջանք կը թափէ իր ունեցած բոլոր կալուածները բարուք վիճակի մէջ պահելու: Պատրիարք Սրբապան Հայրը ըսաւ, թէ կալուածներէն եկած եկամուտը բաւարար է վանքի առօրեայ ծախսերուն եւ կրթական առաքելութեան համար, սակայն յիշուած նորոգութիւնները կատարելու համար վանքը յաւելեալ գումար չունի, այլ կ'ապաւինի մեր ժողովուրդի նուիրատուութիւններուն: Իսկ հանգանակութիւն չընելու պատճառը եղած է չխաչաձեւել Հայաստանի համար կատարուած հանգանակութիւնները երբ Հայրենիքի մեր ժողովուրդը աւելի պէտք ունէր օգնութեան:

Յայտագրին մաս կազմող փոքրիկները եւ անոնց պատասխանատուները մէկական փոքրիկ խաչ ստացան Պատրիարք Սրբազան Հօր ձեռքէն:

Գիշերուան ուշ ժամուն, հոգեւորականներն ու հաւատացեալները գոհունակ սրտով վերադարձան իրենց բնակարանները:

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

Ուրբաթ, Դեկտ. 4, 1998

Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, Արեւմտեան Թեմի հոգեւորականները, թիով 19 հոգի, Առաջնորդ Սրբազան Հօր գլխավորութեամբ, Ուրբաթ, Դեկտ. 4-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Առաջնորդարանի մէջ մասնաւոր հանդիպում մը ունեցան Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր բացման խօսքին մէջ, Առաջնորդարանի նոր համալիրէն ներս բարի գալուստ մաղթեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, յայտնելով որ Նորին Ամենապատուութեան հետ միասնաբար ծառայած են Աւելեան Թեմէն ներս: Պատրիարք Սրբազան Հայրը մասնաւոր սէր ունի Երուսաղէմի Ս. Աթոռին եւ ժառանգաւորաց Վարժարանի նկատմամբ: Կաթողիկոսական Տեղապահ եղած շրջանին, Ս. Էջմիածնի վարչական մեքենան կարգ ու կանոնի մտցուցած էր:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց Արեւմտեան Թեմ կատարած այցելութեան համար: Ապա ընդարձակ տեղեկութիւններ տուաւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կատարած առաքելութեան մասին, շեշտելով, որ ո՛չ որ պէտք է զրկէ Զրիստոնեաներո իրենց հոգեւոր իրաւունքէն: Նորին Ամենապատուութիւնը մանրամասնութեամբ անգրադարձաւ վանքի եւ վանքապատկան կայրածներու նորոգութեան շուրջ, նկատի ունենալով որ շէնքերը հինցած են եւ անպայման նորոգութեան կը կարօտին: Կարեւոր է նաեւ ունենալ նոր բնակարաններ նոր հոգեւորականներու համար: Ս. Փրկիչ Վանքի հողին վրայ տարիներ առաջ սկսուած եկեղեցւոյ շինութիւնը անաւարտ վիճակի մէջ կը մնայ բանաւոր պատճառներով:

Նորին Ամենապատուութիւնը յատկապէս շեշտեց, որ իր Պատրիարք ընտրութենէն ետք, ոչ մէկ կայրած եւ կամ հող ծախսած է: Պատրիարքարանը մասնաւոր ճիգ կը թափէ կայրածաթոյղթերը կարգի գնելու եւ ապահով կերպով պահելու: Երկարատեւ ժամանակով վարձու տրուած կայրածներու համաձայնագրերը վերատեսութեան կ'ենթարկուին, զանոնք ի նպատակ վանքին գործակելու: Սրբոց Հրեշտակապետաց Վանքը լաւ վիճակի մէջ կը գտնուի: Պատրիարք Սրբազան Հայրը խօսեցաւ նաեւ Երուսաղէմի Թարգմանչաց Վարժարանի եւ Յորգանանի Իւզպաշեան-Կիւլպէնկեան Ազգային Վարժարանի մասին, որոնք ենթակայ են Պատրիարքութեան:

Ապա Նորին Ամենապատուութիւնը պատասխանեց տրուած հարցերուն՝ յուսաբանելով երբեմն թերթերուն մէջ տպուած սխալ տեղեկութիւնները Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան գործունէութիւններուն եւ կայրածական հարցերու մասին:

Կէսօրուան ճաշի սեղանին շուրջ եւս շարունակուեցաւ ջերմ խօսակցութիւնը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՂԻՄԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց կազմակերպութեամբ, Ուրբաթ, Դեկտ. 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Մաղիմահայեր եւ Ս. Թարգմանչաց Վարժարանի նախկին ուսանողները հանդիպում մը ունեցան Նորին Ամենապատուութեան հետ: Ներկայ գտնուեցաւ նաեւ Արժ. Տ. Սիփան Զին. Մխսեան:

Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արշակ Զին. Խաչատուրեանի բարի գալստեան խօսքէն ետք, Մաղիմահայութեան ներկայացուցիչը, Տիար Պօղոս Աբրահամեան իր ջերմագին բարի գալստեան խօսքը ըրաւ եւ յայտնեց, թէ Մաղիմահայերը իրենց միացեալ ջանքերով միշտ օգտակար պիտի դառնան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան: Իսկ Տոքթ. Ճորձ Մահիկեան, կարգաց Երուսաղէմի նուիրում իր բանաստեղծութիւնը:

Պատրիարք Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց այս հանդիպման համար եւ ընդարձակ տեղեկութիւններ տուաւ Պատրիարքութեան հոգեւոր, կրթական առաքելութեան մասին, ինչպէս նաեւ վանքապատկան կալուածներու եւ անհրաժեշտ նորոգութիւններու կապակցութեամբ: Նորին Ամենապատուութիւնը յայտնեց, թէ Ս. Թարգմանչաց Վարժարանի ուսանողները, որոնք թիւով 130 աշակերտներ են, իրենց կրթողչակը ամբողջութեամբ չեն կրնար վճարել, հետեւաբար Պատրիարքարանը կը հոգայ մնացեալ ծախսերը: Ան կոչ ուղղեց ներկաներուն, որպէսզի սաներ հովանաւորեն վարժարանէն ներս, նուազեցնելով վանքին նիւթական մտահոգութիւնները: Դպրոցին շէնքը եօթանասուն տարուայ է եւ կարիքը ունի նորոգութեան: Հապարաւոր այցելուներ եւ ուխտաւորներ կու գան թանգարանը տեսնելու: Կիւլպէնկեան Մատենադարանը ուր հարիւր հազար գիրքեր կան, նոյնպէս նորոգութեան կը կարօտի: Ս. Թորոս Եկեղեցիին մէջ ունինք չորս հազար ձեռագիրներ, որոնք ապահով կերպով պէտք է պահպանուին:

Ապա Պատրիարք Սրբազան Հայրը պատասխանեց տրուած հարցումներուն: Հանդիպման ատարտին տեղի ունեցաւ ընկերային ժամ եւ հիւրասիրութիւն: Աջանամբոյրով վերջ գտաւ այս յիշատակելի երեկոն:

ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

Շաբաթ, Դեկտ. 5

Պատրիարք Սրբազան Հօր օրհնաբեր այցելութեան առիթով, Թեմակալ Առաջնորդ՝ Գեղշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի հրաւերով, Շաբաթ, Դեկտ. 5-ին, 1998, առաւօտեան ժամը 10:00-ին, Առաջնորդարանի մէջ տեղի ունեցաւ մամլոյ ասուիս մը:

Առաջնորդ Սրբազան Հայրը խմբագիրներուն եւ կամ թերթի ներկայացուցիչներուն ներկայացուց Հայց. Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներէն Երուսաղէմի Ս. Աթոռին Պատրիարքը՝ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանկուկեանը, որ քաջածանօթ է Ամերիկահայ գաղութին եւ Արեւմտեան Թեմի հաւատացեալներուն: Պատրիարք Սրբազան Հայրը Թեմիս

Առաջնորդը եղած է 1962-1966, առեկի պորտոր հիմերու վրայ գնելով Թեմին հոգեւոր առաքելութիւնը:

Պատրիարք Սրբապան Հայրը հանգամանօրէն խօսեցաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան հոգեւոր եւ կրթական գործունէութիւններուն, Սրբատեղիներու պահպանման եւ վանքապատկան կալուածները բարոք վիճակի մէջ պահելու կապակցութեամբ: Պատրիարք Սրբապան Հայրը անդրադարձաւ հոգեւորականներու պատրաստութեան եւ վանքէն ներս անհրաժեշտ նկատուած բաժանմունքներու եւ անոնց պաշտօնեաներու մասին: Նորին Ամենապատուութիւնը յայտնեց նաեւ, թէ Երուսաղէմի գլխաւոր յարանոսանութիւնները՝ Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ, Լատին Եկեղեցւոյ եւ Հայ Եկեղեցւոյ երեք Պատրիարքութիւնները կը համագործակցին միասնաբար եւ ի պահանջել հարկին համատեղ յայտարարութիւններ կը ստորագրեն ի նպաստ բոլոր Քրիստոնեաներուն: Պատրիարք Սրբապան Հայրը շեշտեց, թէ Պատրիարքութիւնը նոյնպէս իր կանոնաւոր յարաբերութիւնը կը պահպանէ Իսրայէլեան, Յորդանանեան եւ Պաղեստինեան պետական իշխանութիւններուն հետ:

Պատրիարք Սրբապան Հայրը շեշտեց, թէ Պատրիարքութիւնը կը պատրաստուի քրիստոնէութեան 2000 թուականի տօնակատարութիւններուն, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ Քրիստոնէութեան Պետական Կրօն հոչւման 1700-ամեակի հանգիստութիւններուն: Ան կոչ ուղղեց համայն հայութեան, որ այս բացառիկ առիթներով մասնաւոր ուխտագնացութիւններ կազմակերպեն դէպի Սուրբ Երկիր:

Ապա տեղի ունցաւ հարց ու պատասխանի պահ մը եւ Նորին Ամենապատուութիւնը պատասխանեց խմբագիրներուն տուած բոլոր հարցումներուն:

ԱՐԱՐԱՏ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏՈՒՆ

Միշըն Հիլզ, Գալիֆորնիա

Կէսօրէ ետք, ժամը 2:00-ին, Պատրիարք Սրբապան Հայրը պաշտօնական այցելութիւն մը տուաւ Արարատ Հայ Տարեցներու Տունը, որ կը գտնուի Միշըն Հիլզի մէջ, Գալիֆորնիա, ուր սիրալիր կերպով ընդունուեցաւ պատասխանատու Տիար Պապ Շամլեանի եւ Արարատ Տարեցներու Տան Վարչութեան անդամներուն կողմէ:

Բարի գալստեան խօսքէն ետք, Պատրիարք Սրբապանը իր գոհունակութիւնը յայտնեց այս խիստ կարեւոր հաստատութեան բոլոր յարմարութիւններուն համար եւ օրինեց Վարչական Կազմն ու բոլոր նուիրատուները, որոնց ջանքերուն շնորհիւ կառուցուած է այս գեղեցիկ համալիրը եւ յաւագոյն կերպով կը կտաւրէ իր ազգային եւ մարդասիրական առաքելութիւնը մեր սիրեցեալ հայ ժողովուրդին:

Նորին Ամենապատուութիւնը շրջեցաւ թէ տարեցներուն բաժինը եւ թէ ալ հիւանդանոցի բաժինը, խօսեցաւ մեր տարեցներուն հետ եւ օրինեց զանոնք: Ան այցելեց նաեւ մատուոյ եւ թանգարանը, ուր վերջերս Տէր Զօրի անապատէն մեր նահատակներուն աճիւններէն մաս մը փոխադրուեցաւ եւ մասնաւոր Հոգեհանգստեան Արարողութեամբ պետեղուեցաւ:

Պատրիարք Սրբապան Հայրը գոհունակ արտով բաժնուեցաւ Արարատ Հայ Տաղեցնէրու Տունէն:

ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷԶ

Կիրակի, Դեկտ. 6, 1998

Վէն Նայա, Գալիֆորնիա

Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ խնդրանքով եւ Թեմակալ Առաջնորդ՝ Գրշ. Ս. Վաչէ Արք. Յովսէփեանի եղբայրական հրաւերով, յատկապէս Արեւմտեան Թեմ հրաւիրուած էր Երուսաղէմի Հայոց Բարեխնամ Պատրիարք՝ Ամեն. Ս. Թորգոմ Արք. Մանուկեան, համայնքի հայրութեան հետ միասնաբար տօնախմբելու համար եկեղեցւոյ հիմնադրութեան քառասնամեակը: Արդարեւ, քառասուն տարի առաջ Մուխը հաստատուած էր Պատրիարք Սրբապան Հօր կողմէ, երբ ան Առաջնորդն էր Արեւմտեան Թեմին:

Բացառիկ այս հանգրուանին, օրուան Պատարագիչն ու քարոզիչն էր Ամեն. Ս. Թորգոմ Պատրիարքը: Ս. Սեղանին կը սպասարկէին Եկեղեցւոյ Հօգեւոր Հովիւը՝ Արթ. Ս. Շնորհք Քին. Տէմիրճեան եւ Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հօգեւոր Հովիւը՝ Արթ. Ս. Արշակ Քին. Խաչատուրեան: Եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ Տիկին Մարգրիտ Զաւեանի եւ Երգեհոնահարութեամբ Տոքթ. Բան Սինանեանի, ներգաշնակութեամբ կատարեց Ս. Պատարագի եւ Հոգեհանգստեան երգեցողութիւնները:

Քարոզիչն առաջ, Թեմակալ Առաջնորդ Սրբապան Հայրը հաւատացեալներու հոծ բազմութեան ներկայացուց Երուսաղէմի Հայոց Պատրիարքը՝ Ամեն. Ս. Թորգոմ Արք. Մանուկեանը, որ 1990 թուականէն ի վեր, որպէս արժանաւոր Գահակալը Երուսաղէմի Ս. Աթոռին, ամենայն բժախնդրութեամբ նուիրուած է վանքի բարգաւաճման, սրբատեղեաց պայծառութեան եւ հոգեւորականներու պատրաստութեան առաքելութեան: Սրբապան Հայրը շեքմագին բարի գալուստ եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց Նորին Ամենապատուութեան եւ հրաւիրեց զինք, իր պատգամը տալու համար հաւատացեալներուն:

Պատրիարք Սրբապան Հայրը իր եղբայրական պցացումները յայտնեց Առաջնորդ Սրբապան Հօր, իրեն ուղղուած հրաւերին, ինչպէս նաեւ կատարուած բարեմաղթութիւններուն համար: Ապա օրուան Աւետարանի ընթերցման առակի մեկնաբանութիւնը կատարելէ ետք, խօսեցաւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց դարատու հաստատութեան եւ Պատրիարքութեան բազմակողմանի գործունէութիւններուն եւ կատարուելիք նորոգութիւններու շուրջ: Ան կոչ ուղղեց, որ համայն աշխարհի հայութիւնը ուխտաւորաբար այցելէ Երուսաղէմ եւ ականատես ըլլայ մեր հոգեւոր եւ ազգային իրաւունքներուն՝ հաղորդուելով սրբատեղիներու խորհուրդով եւ մեր երանելի հայրերու անմեռ ոգիով:

Նկատի ունենալով, որ Երկուշաբթի, Դեկտ. 7, տասներորդ տարեկիցն էր Հայաստանի մէջ տեղի ունեցած մեծ երկրաշարժին, Թեմակալ Առաջնորդ Սրբապան Հօր հրահանգով, Հոգեհանգստեան մասնաւոր արարողութիւն կատարուեցաւ բոլոր գոհուածներու հոգիներուն համար: Հոգեհանգստեան նախագահեց Առաջնորդ Սրբապան Հայրը:

Հաւատացեալներ հոգեպէս պօրացած Պատրիարք Սրբապան Հօր հոգեւոր պատգամէն եւ երկրաշարժին պոհ գացած իրենց հայրենակիցներուն ոգիով վերապրած՝ մխիթարուած վերադարձան իրենց բնակարանները:

Ս. ՊԵՏՐՈՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՍՏԱՏՄԱՆ 40-ԱՄԵԱԿԻ
 ՃԱՇԿԵՐՈՅԹ ԱՐԱՐԱՏ ՀԱՅ ՏԱՐԷՅՆԵՐՈՒ ՏԱՆ ՄԷՋ

Միշըն Հիլզ, Գալիֆորնիա
 Կիրակի, Դեկտ. 6, 1998

Ս. Պետրոս Հայց. Եկեղեցւոյ հաստատման 40-ամեակին առթիւ, երեկոյեան ժամը 5:30-ին սկսաւ ընկերային ժամը Արարատ Հայ Տարեցներու Տան Տեօքմէճեան Սրահին մէջ, Միշըն Հիլզ Գալիֆորնիա, որուն յաջորդեց պաշտօնական ճաշկերոյթը՝ նախագահութեամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի:

Հոգեւորականներ եւ գլխաւոր սեղանի պատասխանատու անձերը Ս. Պետրոս Եկեղեցիէն, թափօրով ներս մտան սրահին մէջ եւ գրաւեցին իրենց տեղերը: Ընթրիքի ընթացքին սկսաւ գործադրութիւնը օրուան յայտագրին:

Սեղանի օրհնութիւնը կատարեց Պատրիարք Սրբապան Հայրը:

Հանգիստավարն էր Յարգարծան Տիար Ճէյմզ Պոպաճեան, որ Քաղաքապետն է Գալապաքս Քաղաքին: Ան ներկայ գտնուող մեծ թիւով հանդիսականներուն ներկայացուց գլխաւոր սեղանին հիւրերը, հոգեւորականները եւ այլ ականաւոր անձեր:

Քարի գալուստի խօսքը ըրաւ Տարեգարծի Յանձնախումբի Ատենապետուհի՝ իրաւաբան Էտրիէըն Գրիգորեան, յիշելով այն տարիները եւ գործունէութիւնները, երբ Պատրիարք Սրբապան Հայրը Առաջնորդն էր Արեւմտեան Թեմին:

Ս. Պետրոս Եկեղեցւոյ Միսական Խորհուրդի Ատենապետ՝ Տիկին Ռոպ Քէշոյեան, Միսական Խորհուրդի անունով իր ողջոյնի եւ երախտագիտութեան խօսքը ըրաւ, շեշտելով որ Ամեն. Թորգոմ Պատրիարքի հաստատած Մոխը բարգաւաճած եւ ընդարձակուած է եւ շնորհիւ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի հայրախնամ ուշադրութեան եւ ցուցմունքներուն, ինչպէս նաեւ Մոխի երկարամեայ Հոգեւոր Հովիւ եւ այժմ Պատուակալ Հովիւ՝ Արծ. Տ. Շահէ Աւագ Քին. Մէմերճեանի նուիրեալ ծառայութեան եւ ցուցմունքներուն, Մոխը կազմակերպուած է եւ ներկայիս իր հոգեւոր եւ կրթական առաքելութիւնը կը շարունակէ Մոխի Հովիւ՝ Արծ. Տ. Շնորիք Քին. Տէմիրճեանի գլխաւորութեամբ եւ Միսական Խորհուրդի աջակցութեամբ:

Եկեղեցւոյ Պատուակալ Հովիւ՝ Արծ. Տ. Շահէ Աւագ Քին. Մէմերճեան խօսք առնելով յիշեց Մոխի հաստատման սկզբնական այն տարիները, երբ Պատրիարք Սրբապան Հայրը Առաջնորդն էր Արեւմտեան Թեմին: Ան վերյիշեց հաճելի կարգ մը դէպքեր այդ հին օրերէն, ապա իր մասնաւոր յարգանքը մատուց Նորին Ամենապատուութեան եւ Թեմակալ Առաջնորդ Սրբապան Հօր, տարիներու ընթացքին իրենց կատարած քաջարի հոգեւոր առաջնորդութեան եւ հայրական ուշադրութեան համար: Ան իր ուրախութիւնը յայտնեց, որ ներկայիս Արծ. Տ. Շնորիք Քին. Տէմիրճեան, նոր

խանդավառությամբ կը շարունակէ յառաջ տանիլ եկեղեցւոյ հոգեւոր եւ դաստիարակչական առաքելութիւնը:

Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արթ. Տ. Շնորհք Քին. Տէմիրճեան Ս. Պետրոս Եկեղեցւոյ Միապան Խորհուրդի եւ բոլոր կազմակերպութիւններուն եւ հաւատացեալներուն անունով, իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Պատրիարք Սրբապան Հօր, որ եկեղեցւոյ հաստատման քառասնամեակը հոգեւոր ցնծութեան օրի մը վերածեց Ս. Պատարագի մատուցմամբ, հոգեւոր պատգամով եւ այս պաշտօնական ճաշկերոյթին նախագահելով: Ան շեշտեց, թէ Նորին Ամենապատուութիւնը իմը գնելով եւ Ս. Պետրոս Եկեղեցւոյ Օծման Կարգը կատարելով հանդերձ, հաւատքի եւ նուիրումի հունտերը ցանեց հաւատացեալներու հոգիներուն ու մտքերուն մէջ, որոնք աճելով պայծառացան եւ բարգաւաճելով հասան այս օրուան, հակառակ անոր որ 1994-ի երկրաշարժը մեծ վնասներ հասցուց եկեղեցւոյ ամբողջ համալիրին: Տէր Հայրը իր երախտագիտական պագացումները յայտնեց նաեւ Թեմակալ Առաջնորդ Սրբապան Հօր, որ իր Առաջնորդ ընտրուելէն ի վեր եւ յատկապէս Ս. Պետրոս Եկեղեցւոյ ունեցած դժուարին օրերուն, միշտ օգնութեան հասաւ իր ցուցմունքներով եւ քաջաբերութեամբ: Տէր Հայրը նոյնպէս իր գնահատութիւնը յայտնեց Տէր Շահէին, որ համակ նուիրումով պայծառացուց Ս. Պետրոս Եկեղեցին եւ այնպէս յանձնեց իրեն: Տէր Հայրը նոյնպէս իր գնահատութիւնը յայտնեց քառասնամեակի առթիւ պատրաստուած յատուկ գրքոյկի յանձնախումբի անդամներուն եւ յատկապէս Պատրիարք Սրբապան Հօր եւ Առաջնորդ Սրբապան Հօր իրենց ոգևորիչ եւ հոգեւոր պատգամներուն համար:

Ապա տեղի ունեցաւ երաժշտական յայտագիր մը, որուն մաս կազմեցին Ֆրէտ Տարեան եւ Գափրի Մկրտիչեան Գամփօըն իրենց Հայերէն եւ Անգլերէն երգերով՝ դաշնակի ընկերակցութեամբ Մարօ Տօնապետեանի:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան ոգևորութեամբ ներկայացուց օրուան Պատուոյ Հիւրը՝ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանը, որ Հայց. Եկեղեցւոյ բարձրատիճան եւ պատկառելի պայծառ գէմքերէն մին է, Արեւմտեան Թեմի Առաջնորդ եղած ատենը կատարած է կազմակերպչական սքանչելի աշխատանք եւ ապագային իրեն համար հեշտ եղած է սկստած աշխատանքներն ու ծրագիրներ շարունակել՝ առ ի պայծառութիւն Արեւմտեան Թեմի եւ իր Մուխերուն: Սրբապան Հայրը յատկապէս շեշտեց, որ Ս. Պետրոս Եկեղեցւոյ Պատուակալ Հովիւ՝ Արթ. Տ. Շահէ Աւագ Քին. Տէմիրճեան, որպէս Հոգեւոր Հովիւը այս եկեղեցւոյ եւ համայնքին, իր մատուցած 29 տարուան ծառայութեան ընթացքին, կրցաւ իմաստութեամբ ի մի բերել Ամերիկահայ եւ նորեկ հաւատացեալները, որոնք մինչեւ այսօր համերաշխութեամբ եւ ներդաշնակութեամբ միասնաբար կը ծառայեն եկեղեցւոյ: Սրբապան Հայրը յատկապէս յիշեց, թէ Տէր Շահէի ջանքերուն շնորհիւ, Մանուկեան Վարժարանը իր ծնունդը առաւ Ս. Պետրոս Եկեղեցւոյ համալիրէն ներս: Առաջնորդ Սրբապան Հայրը շեշտեց, որ Ս. Պետրոս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արթ. Տ. Շնորհք Քին. Տէմիրճեան մեծ ոգևորութեամբ ու նուիրումով կը ծառայէ այս ընդարձակ Մուխէն ներս եւ թէ մասնաւոր ջանք թափեց, որ քառասնամեակի բոլոր ձեռնարկները յաջողութեամբ

պատկոխին: Ապա Նորին Սրբազնությունը սիրով հրաժիրեց Նորին Ամենապատուությունը, որ իր պատգամը տայ ներկաներուն:

Պատրիարք Սրբազան Հայրը իր եղբայրական գոհունակությունը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, իր *«հոգիով»* կատարած արտայայտություններուն եւ բարեմաղթություններուն համար: Ապա խօսեցաւ եկեղեցւոյ հոգեւոր սպասաւորներուն եւ հայ հաւատացեալներուն միասնաբար ծառայութեան եւ մեր մատաղ սերունդի գաստիարակութեան մասին: Ս. Պետրոս Եկեղեցին որպէս տիպար եկեղեցի եւ Մուխ, միշտ գիտակից եղած է իր առաջնահերթ հոգեւոր եւ կրթական առաքելութեան եւ յատկապէս երիտասարդաց կազմակերպութեան եւ Կիրակնօրեայ Վարժարանի զօրացման աշխատանքներուն մէջ: Նորին Ամենապատուությունը յիշեց, որ Ս. Պետրոս Եկեղեցւոյ հոգեւոր մթնոլորտին եւ կազմակերպութիւններուն մէջ սնած եւ գաստիարակուած Տիրան Սրկ. Փեթրոյեան, Տէր Մարգիս վերանորոնուելով, քահանայ ձեռնադրուեցաւ այս տարի եւ ներկայիս որպէս Հոգեւոր Հովիւ կը ծառայէ Սան Ֆրանսիսկոյի Ս. Յովհաննէս Եկեղեցիէն ներս:

Պատրիարք Սրբազան Հայրը խօսեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հոգեւոր, կրթական, շինարարական եւ Սրբատեղիներու մէջ ունեցած իրաւունքներուն եւ անոնց պահպանման մասին՝ շեշտելով, որ իր Պատրիարքութեան օրով ո՛չ մէկ կալուած ծախուած է, եւ թէ հոգեւորական եւ աշխարհական կամաւորներէ բաղկացած Կալուածոց Յանձնախումբ մը հաստատուած է, որոնք կը զբաղուին կալուածներու հարցով: Պատրիարք Սրբազան Հայրը շեշտեց պատրաստուած նոր հոգեւորականներ ունենալու հարցը: Ժառանգաւորաց Վարժարանէն ներս ուսանողները ներկայիս եկած են Հայաստանէն: Բացի կրօնական գիտելիքներէ, կը սորվին Անգլերէն, Արաբերէն, Եբրայեցերէն եւ Հայերէն Գրաբար լեզուները եւ կ'առնեն նաեւ համակարգիչի (computer) դասեր:

Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքի արատին յուշանուէր մը յանձնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ս. Պետրոս Եկեղեցւոյ Միական Խորհուրդի Ատենապետոյի՝ Ռոպ Բէշոյեանի:

Յիշատակելի այս ճաշկերոյթը փակուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր *«պահպանիչ»* աղօթքով եւ միաբերան արտասանուած Տէրունական Աղօթքով: Ապա ներկաներէն շատեր յարակից սրահին մէջ անձամբ ողջունեցին Նորին Ամենապատուությունը եւ իրենց գոհունակությունը յայտնեցին այս օրինաբեր այցելութեան համար:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՂԱՃԱՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

Փաստսինա, Գալիֆորնիա

Երկուշաբթի, Դեկտ. 7, 1998

Երեկոյեան ժամը 7:00-ին, Նորին Ամենապատուությունը Առաջնորդ Սրբազան Հօր եւ հոգեւորականներով շրջապատուած, *«հրաշափառ»*-ի արարողութեամբ մուտք գործեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիէն ներս եւ կանոնական աղօթքէն ետք, տեղի ունեցաւ աջահամրոյր:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՀԱՅԵՐ Ս. ԵՐԿՐԻՆ ՄԷՋ» ԽՈՐԱԳՐՈՎ

Այս բացառիկ երեկոն կազմակերպած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Վազգէն Քին. Մովսէսեան, 1700-ամեակի գատիարակչական ծրագրին տակ:

Տէր Հայրը իր բարի գալուստի խօսքը ըրաւ՝ երախտագիտութիւնը յայտնելով Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, որ սիրայօծար կերպով յանձն առած էր խօսիլ այս կարեւոր նիւթին շուրջ:

Պատրիարք Սրբազան Հայրը Ս. Երկրի հակիրճ պատմականը ընելէ ետք, ըսաւ որ իր ժամանակին Երուսաղէմի Գրիգոր Շղթայակիր Պատրիարքը վանքին պարտքը փակելու համար, ստիպուած Թուրքիոյ պանապան շրջանները այցելեց եւ հանգանակութիւն ընելով փակեց վանքին բոլոր պարտքը:

Նորին Ամենապատուութիւնը Սրբոց Յակոբեանց Վանքի եկեղեցիները եւ հայապատկան այլ եկեղեցիներ եւ սրբատեղիներ ցոյց տուաւ սահիկներով, իւրաքանչիւրին մասին տալով բացատրութիւններ եւ պատմական գէպքեր: Պատրիարք Սրբազան Հայրը պատասխանեց նաեւ տրուած հարցումներուն:

Ներկաները հոգեպէս զօրացած եւ ազգային հպարտութեամբ բաժնուեցան սրահէն:

ՄԱՍՆԱԻՈՐ ՃԱՇ «ԳԱԼԻՖՈՐՆԻԱ ԳԼԱՊ»Ի ՄԷՋ Հիրընկալութեամբ Երուսաղէմի Ս. Ղապար Ուխտին Լու Անճելըս, Երեքշաբթի, Դեկտ. 8, 1998

Երուսաղէմի Ս. Ղապար Ուխտը գլխաւորութեամբ Դոկտ. Հէնպ Վօն Լէտընի, իր կազմակերպած մասնաւոր հիրընկալութեամբ, պատուեց Նորին Ամենապատուութիւնը: Բացառիկ այս հաւաքին ներկայ գտնուեցաւ նաեւ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան եւ Լու Անճելըս քաղաքի պաշտօնեաներ եւ այլ հիւրեր, շուրջ 25 հոգի:

Բարի գալստեան եւ ողջոյնի խօսքէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց այս մտերմիկ հաւաքոյթին մասին եւ տեղեկութիւններ տուաւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան գործունէութիւններուն շուրջ, ինչպէս նաեւ ընդհանուր գիծերով՝ Երուսաղէմի մասին, յայտնելով որ յատուկ ծրագիրներ կը մշակուին Քրիստոնէութեան 2000 թուականի հանդիսութիւններուն համար: Ապա շերմ մթնոլորտի մէջ տեղի ունցան ընդհանուր խօսակցութիւններ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՒՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Լու Անճելըսի պետական մատենադարանին համար պատմական օր մը եղաւ, երբ Դեկտ. 8-ի երեկոյեան Նորին Ամենապատուութիւնը այցելեց մատենադարանը: Մասնաւոր յայտագիր մը պատրաստուած էր Կեդոնական Մատենադարանի Միջազգային Լեզուներու Բաժանմունքին կողմէ:

Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանար Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը: Բարձրատիպի Հոգեւորականները շերմապէս դիմաւորեցան մատենադարանի պատասխանատուներուն եւ անձնակազմին կողմէ: Օրուան ձեռնարկը համակարգողն էր մատենադարանի պատասխանատուներէն Սիլվա Նաթալի Մանուկեան: Ներկայ էին Երուսաղէմի Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի հիմնադիր անդամներ եւ բարեկամներ՝ Դատաւոր Արմանտ Արապեան, Վահան Կրեկոր, Խաչիկ Իվան Մանուկեան եւ արեւի բան 250 հիւրեր:

Պատրիարք Սրբազան Հայրն ու իր շքախումբը առաջնորդուեցան դէպի Միջպագային Լեզուներու Բաժանմունքը՝ բացումը կատարելու համար Շահան Նաթալի Հայ Լեզուի եւ Գրականութեան Հաւաքածոյին, որուն հովանաւորութիւնը ստանձնած էին Սիլվա եւ Խաչիկ Մանուկեան եւ իրենց գաւակները Անգրանիկ, Վահան եւ Արա: Սիլվա Մանուկեան իր գեղեցիկ ուղերձին մէջ հպարտութեամբ յայտնեց թէ Լոս Անճելըսի պետական մատենադարանին մէջ հայ ժողովուրդի եւ գրականութեան մասին նիւթեր տրամադրելի պիտի ըլլան եւ թէ 4,000 գիրքեր կան ներկայիս:

Իր խօսքին մէջ, Նորին Ամենապատուութիւնը գոհունակութիւնը յայտնեց, որ Սիլվա եւ Խաչիկ Մանուկեան իրենց գաւակներով եւ Երուսաղէմի Կիւլպէնկեան Մատենադարանի բարեկամները, միասնաբար ջանք թափելով իրականութիւն դարձուցին Լոս Անճելըսի Պետական Մատենադարանին մէջ ունենալու Շահան Նաթալի Հայ Լեզուի եւ Գրականութեան Հաւաքածոյի բաժանմունքը, որմէ շատեր պիտի օգտուին, ծանօթանան մեր ժողովուրդի պատմութեան եւ գրականութեան: Պատրիարք Սրբազան Հայրը ուրախութեամբ յայտնեց, թէ 1992 թուականէն ի վեր Սիլվա Մանուկեան Երուսաղէմ մեկնելով, արդիական միջոցներով կը կազմակերպէ վանքի Կիւլպէնկեան Մատենադարանը:

Ապա ցոյց տրուեցաւ Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի անցեալի եւ ներկայի սահիկները՝ մասնաւոր բացատրութիւններով:

Լոս Անճելըսի Պետական Մատենադարանի պատասխանատուներէն Օլիվիա Կուէվա-Ֆերնանտէզ, Լոս Անճելըսի Պետական Մատենադարանի պատասխանատուներուն կողմէ ստորագրուած եւ շրջանակի մէջ առնուած յատուկ վկայագիր մը յանձնեց Նորին Ամենապատուութեան, որ գոհունակութեամբ ընդունուեցաւ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԿԵՒՈՂԱԿԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Ֆրէվնո, Դեկտ. 9-11

Չորեքշաբթի, Դեկտ. 9-ին, երեկոյեան ժամը 7:00-ին Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը «Հրաշափառ»-ի արարողութեամբ մուտք գործեց Ֆրէվնոյի Ս. Պողոս Հայց. Եկեղեցիէն ներս: Թափօրին մաս կը կազմէին հետեւեալ հոգեւորականները.- Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Հոգշ. Տ. Սասուն Ս. Վրդ. Զմրուխտեան, Մէն Ուազին Հովիտի Եպիսկոպոսական Եկեղեցիէն՝ Գեղշ. Տ. ձան-Տէյվիա Եպիսկոպոս, Ֆաուլըրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արծ. Տ. Գէորգ Քին. Առաքելեան, Եգեմի Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արծ. Տ. Սահակ Քին. Քէիշեան, Սագրամէնոյի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արծ. Տ. Եղիա Քին. Հայրապետեան, Ֆրէվնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝

Արժ. Տ. Վահան Քին. Կոստանեան, Արժ. Տ. Շահէ Աւագ Քին. Ալթունեան, Արժ. Տ. Արթուն Քին. Սմբատեան, Արժ. Տ. Վարդան Աւագ Քին. Տիւլէրեան, Արժ. Տ. Վարդան Քին. Գասպարեան, հիւր հոգեւորականներ տարբեր յարանուանութիւններէ, Ս. Պօղոս Եկեղեցւոյ Սարկաւազները եւ Դպրաց Դասը:

Կանոնական աղօթքէն ետք, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Հոգշ. Տ. Սասուն Մ. Վրդ. Չմբուխեան, հոգեւորականներու եւ հաւատացեալներու կողմէ բարի գալուստ մաղթեց Նորին Ամենապատուութեան, շեշտելով, որ Պատրիարք Սրբազան Հօր գլխատրութեամբ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը տէր կը կանգնի մեր ժողովուրդի գարաւոր իրաւունքներուն:

Պատրիարք Սրբազան Հայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ Պատրիարքութեան կատարած կարեւոր դերին մասին եւ միեւնոյն ատեն նշեց կարգ մը դժուարութիւնները եւ ապագայի ծրագիրները: Արարողութեան աւարտին, տեղի ունեցաւ աշահամբոյր, որու ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը մէկական փոքրիկ խաչեր բաժնեց հաւատացեալներուն:

Ապա Եկեղեցւոյ Հայկ Պերպլեան Սրահին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը սահիկներ ցոյց տալով, բացատրութիւններ տուաւ Երուսաղէմի եւ այլ քաղաքներու մէջ հայապատկան սրբավայրերու մասին: Նորին Ամենապատուութիւնը պատասխանեց նաեւ տրուած հարցումներուն:

Օրուան յայտագիրը վերջ գտաւ Գերշ. Տ. Ճան-Տէյվիտ Եպս. Սքաֆիլտի առողջութեան եւ բարեմաղթութիւններու խօսքով եւ փակման աղօթքով:

Ապա ի պատիւ Նորին Ամենապատուութեան, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ պատրաստուած Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԴԵԿՏ. 10

Առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հայրը Ֆրէզնոյի շրջանի հոգեւորականներուն եւ Մուխի ներկայացուցիչներուն հետ նախաճաշ մը ունեցաւ, որու ընթացքին ներկաները առիթը ունեցան միասնաբար հաճելի պահ մը ունենալու եւ գաղափարներու փոխանակութիւններ կատարելու Նորին Ամենապատուութեան հետ: Այս կարգադրութեան պատասխանատուն էր Ֆաուլըրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Գէորգ Քին. Առաքելեան:

Ֆրէզնո գտնուած միջոցին, Պատրիարք Սրբազան Հայրը այցելեց Ֆրէզնոյի Հայ Տարեցներու տունը ինչպէս նաեւ Ֆրէզնոյի Համագաղութային Հայկական Վարժարանը:

Իսկ երեկոյեան ժամը 6:00-ին Ֆրէզնոյի Պետական Համալսարանին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը բանախօսն էր Հայկական Ուսմանց Բաժանմունքի Տարեկան Ճաշկերոյթին, որուն կազմակերպիչն էր Դոկտ. Պարթ Տէր Մկրտիչեան:

Պատրիարք Սրբազան Հօր Ֆրէզնո կատարած այցելութեան իրեն կ'ընկերանային, այցելութեան ընդհանուր պատասխանատու Տիար Հայկ Գրիգորեան եւ Պատրիարք Սրբազան Հօր եղբայրը՝ Տիար Սուրեն Մանուկեան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Ման Ֆրանսիսկոյի Շրջան, Դեկտ. 11-13

Ֆրեյնոյի Շրջան իր կատարած այցելութենէն ետք, Դեկտ. 11-ին, Պատրիարք Սրբապան Հայրը ընկերակցութեամբ իր եղբօր՝ Սուրէն Մանուկեանի եւ Արեւմտեան Թեմ այցելութեան ընդհանուր պատասխանատու Տիար Հայկ Գրիգորեանի, մեկնեցաւ դէպի Հիւսիսային Գալիֆօրնիա (Ման Ֆրանսիսկոյի շրջան): Երեկոյեան Նորին Ամենապատուութիւնը հիւրն է Վարդանանց Ասպետներու, որոնք «*Քրիսմըս*»-ի առթիւ մասնաւոր ընթրիք մը կ'ազմակերպած էին, որուն համակարգիչն էր Տոքթ. Ճան Փուչիկեան:

Բարի գալստեան եւ ողջոյնի խօսքէն ետք, Պատրիարք Սրբապան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց, որ առիթը ունեցաւ հանդիպելու Վարդանանց Ասպետներու հետ: Ապա անոնց տեղեկութիւններ տուաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ընդհանուր գործունէութիւններուն եւ կալուածներու նորոգութեան կարիքներուն շուրջ: Ընթրիքի ընթացքին տեղի ունցաւ հաճելի վրոյց եւ Նորին Ամենապատուութիւնը պատասխանեց իրեն ուղղուած բոլոր հարցումներուն:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍԹԱՆՖՈՐՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Դեկտ. 12

Նախապէս կատարուած կարգադրութեան համաձայն, առաւօտուն Պատրիարք Սրբապան Հայրը իր շքախումբով այցելեց նշանաւոր Սթանֆորտ Համալսարանը: Հիւրընկալն էր Դոկտ. Ֆրանսիս Էվերէթ: Պատրիարք Սրբապան Հայրը շրջեցաւ համալսարանի կարգ մը մասերը՝ ստանալով պատմական բացատրութիւններ եւ տեղեկութիւններ համալսարանի ուսումնական ծրագիրներուն շուրջ:

Նորին Ամենապատուութիւնը գնահատեց Սթանֆորտ Համալսարանին կատարած երկարամեայ կրթական ծառայութիւնը բազմաժապար ուսանողներու, որոնք այսօր օգտակար կը հանդիսանան համայն մարդկութեան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Ս. ԱՆԴՐԷԱՍ ՀԱՅՏ. ԵԿԵՂԵՅԻ

Գուփըրթինս, Դեկտ. 12

Շաբաթ, Դեկտ. 12-ին, Մանթա Գլարա Հովտի հայ գաղութը մեծ խանդավառութեամբ եւ ուրախութեամբ դիմաւորեց Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին: Պատրիարք Սրբապան Հօր կ'ընկերանային այցելութեան ընդհանուր պատասխանատու Տիար Հայկ Գրիգորեան եւ Պատրիարք Սրբապան Հօր եղբայրը՝ Տիար Սուրէն Մանուկեան: Օրինաբեր այս առիթով Տոքթ. եւ Տիկին Փիթըր եւ Բամելա Ապաճիները իրենց բնակարանին մէջ հիւրասիրութիւն մը կ'ազմակերպած էին ի պատիւ Պատրիարք Սրբապան Հօր, ուր հրաւիրուած էին գաղութէն ներս երկար տարիներու ծառայութիւն ունեցող անձեր, որոնք տարիներէ ի

վեր ծանօթ էին Նորին Ամենապատուութեան: Հրաւիրուած էին նաեւ Գուփըթթինոյի Ս. Անդրեաս Հայց. եկեղեցւոյ Միաական խորհուրդի անդամները:

ԺԱՄԱՆՈՒՄ Ս. ԱՆԴՐԷԱՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Երեկոյեան ժամը 7:00-ին, Ամեն. Պատրիարք Սրբապան Հայրը իր շքախումբով ժամանեց Ս. Անդրեաս Հայց. եկեղեցի եւ ուրախութեամբ դիմաւորուեցաւ աւելի քան 300 հաւատացեալներու եւ յատկապէս օրուան հանդիսավար՝ Տիար Ճէյ Հաչիկեանի, Ս. Անդրեաս Հայ Դպրոցի եւ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտութեան կողմէ, որոնք երգեցին Փոքր է Աշխարհը, Կոմիտասի Սուրբ Սուրբ-ը, Սուրբ Աստուած եւ Քրիստոս ի մէջ Ս. Պատարագի երգերը:

Այլին Չօրեան արտասանեց Սիամանթոյի *Ես Երգելով Կոչեմ Մեռնիլը*, իսկ Յարութ Միսեան արտասանեց Պատրիարք Սրբապան Հօր գրած գլուխ գործոց *Դուն Մեր Հրաշքը*: Եկեղեցւոյ երիտասարդաց կազմակերպութեան կողմէ Շահան Ստեփանեան խօսելով, բարի գալուստ մաղթեց Նորին Ամենապատուութեան: Տէր եւ Տիկին Պէնճըմին եւ Վիոյա Չուբաք յայտագիրը աւարտեցին Խաչատուրեանի դաշնակի գեղեցիկ նուագներով:

Ապա տեղի ունեցաւ աջահամբոյր: Բոլոր աշակերտներն ու ուսուցչական կազմը մօտենալով համբուրեցին Պատրիարք Սրբապան Հօր աջը՝ իւրաքանչիւրը մէկական փոքրիկ խաչ ստանալով:

Իր փակման խօսքին մէջ, Պատրիարք Սրբապան Հայրը քաջալերեց ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը, որ հայաշունչ նոյն ոգիով շարունակեն իրենց սկսած դաստիարակութիւնները, Հայ Դպրոցն ու Կիրակնօրեայ Վարժարանի աշխատանքները: Պատրիարք Սրբապան Հայրը ըսաւ, թէ 1962-66 տարիներուն, երբ ինք Առաջնորդն էր Արեւմտեան Թեմին, Սանթա Գլաթա Հովիտ այցելելով միշտ կը քաջալերէր այս փոքրիկ հայկական գաղութը: Նորին Ամենապատուութիւնը ուրախութեամբ շնորհատրեց բարգաւաճած գաղութը, որ անցնող տարիներու ընթացքին միասնական ճիգով եւ զոհողութիւններով, եկեղեցւոյ այն տաճարն ունէր Հոգեւոր Հովիւ՝ Աթ. Տ. Վազգէն Քին. Մովսէսեանի գլխաւորութեամբ եւ Թեմակալ Առաջնորդ՝ Գեորգ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի ցուցմունքներով, կարողացած էր կառուցել տալ հայկական ճճով այսպիսի գեղեցիկ եկեղեցի մը:

Յայտագրի փակումէն ետք, Պատրիարք Սրբապան Հայրը առաջնորդուեցաւ դէպի Ամիրեան Սրահ, ուր շքեղ հիւրասիրութիւն մը պատրաստուած էր եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւններուն կողմէ: Ներկաները առիթը ունեցան անձամբ հանդիպելու եւ պրոցելու Պատրիարք Սրբապան Հօր հետ:

Նոյն օրը, եկեղեցւոյ Միաական խորհուրդի Ատենապետ, Տիար Տիգրան Էքմէճճի ծննդեան տարեգարձն ըլլալով, Միաական խորհուրդը զինք պատուեց յատուկ կարկանդակով:

Ներկաները Պատրիարք Սրբապան Հօր հոգեւոր խօսքը լսելով եւ օրհնութիւնները ստանալով, հոգեպէս պօրացած բաժնուեցան սրահէն:

**ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՀԱՆԳԻՄԱԽՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ
Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ
Կիրակի, Դեկտ. 13, 1998, Սան Ֆրանսիսկո**

Պատմական անմոռանալի օր մըն էր Սան Ֆրանսիսկոյի Մոցի շրջանի Հայց. Եկեղեցիներուն եւ հաւատացեալներուն համար:

Օրուան հանգիստը Ս. Պատարագը մատոյց եւ յաւուր պատշաճի քարոզեց Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեան, իր գոհունակութիւնը յայտնելով եւ փառք Տալով Աստուծոյ, որ անգամ մը եւս կը գտնուի այս եկեղեցւոյ մէջ, աղօթելու եւ ապա հանգիպելու հաւատացեալներուն: Ս. Պատարագին իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արթ. Տ. Սարգիս Քին. Փեթոյեան, Օգլընտի Ս. Վարդան Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արթ. Տ. Մեսրոպ Քին. Սարաֆեան եւ Սագրամէնթոյի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արթ. Տ. Եղիա Քին. Հայրապետեան: Ս. Յովհաննէս, Ս. Անգրէաս եւ Ս. Վարդան Եկեղեցիներուն միացեալ երգչախումբը՝ ղեկավարութեամբ Լինտա Գալուստեան Լէսթըրի եւ ձօան Գուպաթեանի, եւ Երգեհոնաւարութեամբ Նայիրի Սարգիսի, գեղեցիկ կերպով կատարեցին Ս. Պատարագի երգեցողութիւնը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Արարողութեան աւարտին, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ՝ ի պատիւ Պատրիարք Սրբազան Հօր: ճաշկերոյթի կազմակերպչական աշխատանքներուն Ատենապետներն էին Չարլզ ձանսիկեան եւ Տիկին Պիաթրիս Գլըճեան: Արթ. Տ. Սարգիս Քին. Փեթոյեանի բարի գալստեան եւ ողջոյնի խօսքէն ետք, օրուան յայտագրին մաս կազմեցին Լուիզ Նալպանտեան, գաշնակով, Թամար Մաղսիսեան արտասանութիւններով եւ Լինտա Գալուստեան Լէսթըր մեներգով:

Աւելի քան 300 հոգի ներկայ գտնուեցաւ այս ջերմ հիւրասիրութեան՝ կազմակերպուած եւ պատրաստուած եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ, որուն Ատենապետն էր Իզապէլ Տօգուպեան:

Պատրիարք Սրբազան Հայրը իր գնահատութիւնը յայտնեց ներկայացուած գեղեցիկ յայտագրի համար, օրինեց վանոնք եւ բոլոր կազմակերպողները եւ պատասխանատուները որոնք Սան Ֆրանսիսկոյի Մոցի շրջանին մէջ վառ կը պահեն հայու ոգին եւ նուիրեալ ծառայութեամբ կը պայծառացնեն իրենց Մուխերն ու Հայց. Եկեղեցին:

Ներկաները խորապէս տպաւորուած օրուան Ս. Պատարագի արարողութենէն, ճաշկերոյթի ջերմութենէն, Պատրիարք Սրբազան Հօր հոգեւոր պատգամէն եւ Երուսաղէմի Սրբավայրերու հաղորդակից գառնալով, հաւատքով պօրացած եւ հոգեպէս մխիթարուած բաժնուեցան սրահէն:

Պատրիարք Սրբազան Հայրը Երկուշաբթի, Դեկտ. 14-ին վերադարձաւ Լոս Անճելըս:

**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱՆՈՑԻՆ ՄԷՋ
ԿԼԵՆՏԵՂ, ՀԻՆՂԶԱՐՔԻ, ԴԵԿՏ. 17**

Լարք Երաժշտական Ընկերակցությունը իր Հրատարակչական Յանձնախումբի նախաձեռնությամբ, երեկոյեան ժամը 8:00-ին Կլենտեղի մէջ, Գալիֆորնիա, կազմակերպած էր որ Պատրիարք Սրբապան Հայրը դասախօսէր «Կոմիտասի հանձարը իր երգերուն մէջէն» նիւթին շուրջ: Նորին Ամենապատուութիւնը որպէս կոմիտասագէտ, տարբեր տեղեր դասախօսած է Կոմիտասի մասին թէ՛ Հայերէնով եւ թէ՛ ալ Անգլերէնով: Նոյնպէս գրած է Կոմիտասի երաժշտութեան մասին:

Հետաքրքրական եւ լուսաբանող այս դասախօսութեան ներկայ գտնուեցաւ երաժշտասէր կոկիկ հասարակութիւն մը: Պատրիարք Սրբապան Հայրը մանրամասնութեամբ խօսեցաւ իր նիւթին շուրջ, լաւագոյն կերպով ներկայացնելով «Կոմիտասի հանձարը իր երգերուն մէջէն»: Ապա պատասխանեց տրուած հարցումներուն:

Դասախօսութենէն ետք, տեղի ունեցաւ ընդունելութիւն մը ի պատիւ Պատրիարք Սրբապան Հօր, որու ընթացքին ներկաները առիթը ունեցան անձամբ հանդիպելու եւ մօտէն ճանչնալու Նորին Ամենապատուութիւնը:

Նորին Ամենապատուութիւնը Արեւմտեան Թեմ իր կատարած օրինաբեր այցելութեան ընթացքին, անձնական հանդիպումներ ունեցաւ եւ մտերմիկ շրջանակներու մէջ մասնաւոր ճաշ տրուեցաւ ի Պատիւ Պատրիարք Սրբապան Հօր:

ՄԵԿՆՈՒՄ ԴԵՊԻ ՆԻԻ ԵՌՐՔ

Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Արեւմտեան Թեմ իր կատարած այցելութիւնը աւարտած ըլլաով, Ուրբաթ, Դեկտ. 18-ի կէսօրին, թոյլք տունելով մեկնեցաւ դէպի Նիւ Եորք:

Ողջերթ եւ բարի ճանապարհ մաղթելու համար, Լոս Անճելըսի օգակայան գացած էին Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, իր օգնականները՝ Տ. Սիփան Քին. Մխսեան, Տ. Յովսէփ Քին. Յակոբեան եւ Տ. Տաթևի Քին. Յարութիւնեան: Նոյնպէս ներկայ էին այցելութեան ընդհանուր պատասխանատու՝ Տիար Հայկ Գրիգորեան, Պատրիարք Սրբապան Հօր եղբայրը՝ Տիար Սուրէն Մանուկեան եւ միւս եղբայրը՝ Տիար Խաչիկ Մանուկեան եւ իր Տիկինը Սիվա Մանուկեան:

Պատրիարք Սրբապան Հօր օրինաբեր այցելութիւնը Արեւմտեան Թեմ, հոգեկան հրճուանքի եւ Երուսաղէմով ներշնչումի եւ օրհնութեան օրեր եղան:

ՄԻՓԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԻՍԵԱՆ